ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

04. 04. 2016թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Դ. Մանուչարյանը, Ա. Ջանազյանը, Գ. Հակոբյանը, Է. Հախ-վերդյանը, Հ. Մկրտչյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Ադլոյանը, Ն. Սարգսյանը, Վ.Դո-խոյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
Լ. Ասլանյանը - մարզպետի խորհրդական
Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
Ա. Չատինյանը - ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

Օ ր ա կ ա ր գ ու մ՝

1. Անցյալ ժամանակաընթացքում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. Մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Վ. Ասատրյանին, Տ. Բադոյանին, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզի համայնքների ղեկավարների կողմից սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ:

2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Խաչատրյանին՝

Ներկայացնել առաջարկություններ մարզպետարանի ստեղծման 20-ամյակի կապակցությամբ անցկացվող միջոցառման վերաբերյալ:

/ժամկետ՝ 15.04.16թ/

3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Խաչատրյանին, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզպետարանի և մարզային ենթակայության հաստատությունների կողմից շաբաթօրյակների կազմակերպման և անցկացման նկատմամբ:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**

Արձ Մ. Հովհաննիսյան
Հեռ. 0322/2- 31- 99/